

Մուսկի, տեր (ստորագրություն և վարդապետական կնիքադրոշմ), XIX դ.—1 (№ 24/8746):

Շահխարունյանց Հովնանենս վրդ., Մոսկվա, 1844 թ.—2 (№№ 50/8859, 51/8860):

Պոզոս, 1730 թ.—1 (№ 7/6502):

Ռոտինյանց Մ. Գ., [Թիֆլիս], XIX դ.—1 (№ 38/8846):

Ստեփանենոս Կյուվուլյանեցի, Կ. Պոլիս,

1973 թ.—1 (№ 11/6691):

[Վարդապարյանց] Գրիգոր վրդ. Աշտարակեցի, Էջմիածին, 1821 թ.—1 (№ 19/7045):

Տեր-Մկրտչյան Փառանձեմ, Մոսկվա, 1946 թ.—1 (№ 59/9261):

Փանյանց Մելիսն Գասպարի, XIX դ.—1 (№ 55/8893):


Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

### ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿՆԻՔ-ՄԱՏԱՆԻ ՂՐԻՄԻՑ

1978 թ., գյուղատնտեսական հողային աշխատանքներ կատարելիս, Բախչիսարայի շրջանի Բոգատիր գյուղի մոտ քանդվել էր ուշ միջնադարյան սալաքարային մի դամբարան: Բուլղոզերավար Ա. Պ. Լիպատկինը Բախչիսարայի պատմաճարտարապետական թանգարան հանձնեց այդ աշխատանքների ժամանակ հայտնաբերած արծաթե մատանի-կնիք՝ հայերեն արձանագրությամբ, փորագրված սերղոլիկե ներ-

Դրանցից մեկն ուներ հունարեն<sup>1</sup>, իսկ հինգը՝ հայերեն արձանագրություններ: Վերջիններս թվագրված են եղել 1731, 1737 և 1771 թթ.: Ներկայումս բոլոր տապանաքարերը, ինչպես և մատուղը, գոյություն չունեն:

1978 թ. աշխատանքների ժամանակ մաքրվել են տեղական կրաքարի սալերով երեսապատված մի քանի դամբարաններ: Թաղումնային փորքաթիվ իրերից (արծաթե մանր զարդեր,



Նկ. 1. Հայերեն արձանագրությամբ կնիք-մատանի Ղրիմի Բոգատիր գյուղից, XVII դ. դամբարանից:

դիրի վրա: Թանգարանին նա հանձնեց նաև ավերված դամբարաններից դուրս եկած արծաթե կոճակներ և Ղրիմի խաներ Սելիմ Գիրեյ II-ի (1743—1748) և Ղրիմ Գիրեյի (1758—1764, 1768—1769) արծաթե երկու դրամ:

Դամբարանադաշտի պահպանման համար Բախչիսարայի թանգարանի կողմից անցկացվեցին մասնակի պեղումներ: Դամբարանները գտնվում են Բոգատիր գյուղից մոտ 300—350 մետր դեպի հյուսիս, Բելրեկ գետի ձախակողմյան վտակի աջ ափին, հյուսիսային և հարավարևմտյան կողմերից մանր բլուրներով շրջափակված փոքր հովտում: Դամբարանադաշտը քրիստոնեական ընդարձակ գերեզմանոց է, որտեղ 1914 թ. սիրող-հնագետ Մ. Ի. Սկուրբտովը գրանցել էր միախորան մի մատուղ՝ շրջապատված 165 կրաքարե տապանասալերով: 19 Հանդես, № 1

ապակե մանյակ, դրամներ), ինչպես և տապանաքարերից դատելով դամբարանադաշտը կարելի է թվագրել XVIII դարով, թեև բացառված չէ, որ այն առաջացած լինի ավելի վաղ: Ամենայն հավանականությամբ գերեզմանոցը գործել է մինչև 1778 թ. և լքվել քրիստոնեական բնակչության հիմնական զանգվածի, ինչպես նաև Բոգատիր գյուղի հույն բնակչության Ա. Վ. Սուվորովի կողմից Ռուսաստան տեղա-

<sup>1</sup> В. В. Латышев, Новые христианские греческие надписи Крыма, ИТУАК, № 54, Симферополь, 1918, էջ 44:

<sup>2</sup> X. И. Кучук-Иоаннесов, Армянские надписи из Крыма, ИТУАК, № 52, Симферополь, 1918, էջ 44:



անհատին, ուստի և նրա վրա պատկերվել է առհմական խորհրդանիշը կամ փորագրվել արձանագրություն:

X դարում հայկական կնիքներն ընդգծվածորեն տեսակավորվում են. Քովմա Արծրունին կնիքների մի տեսակը ընդթագրում է «տերունական» բառով<sup>9</sup>: Ստեփանոս Օրբելյանն ավելացնում է նաև «պատրիարքական» և «սովորական» տերմինները: «Պատրիարքական» կոչվել են հոգևոր պետի կնիքները և ըստ այնմ էլ կարող են դասվել պաշտոնականների թվին: «Սովորականի» տակ ակներևաբար կարելի է ննթաղել օրենքը հավաստիացնող ծառայողական կնիքները: «Տերունականները» կարող էին լինել գերադանցապես անհատական գործածման ընդթ: Հատկանշական է, որ Օրբելյանն ընդգծում է այդ կնիքների ձևը, մատնանշելով, որ դրանք եղել են կնիք-մատանին<sup>10</sup>: Հենց այդպիսի կնիք է եղել Սմրատ թագավորի մատանին, հայտնաբերված 1940 թ. Ջելենջուկում, վրան արարատառ արձանագրություն՝ ԱՇՈՒՏ [Ի]ՐՆ ՍԻՐԱՏԱՆ:

Այս ամենի հիման վրա կարելի է եզրակացնել, որ իրագործվող մոտակա դամբարանից հայտնաբերված կնիք-մատանին կարող է պատկանել «տերունականների» շարքին<sup>12</sup>: Ար-

ձանագրությունից դատելով կնիքը նախատեսված է եղել անհատական գործածության համար: ՔԻ ՄԻ (Քրիստոսի ծառայ) արտահայտությունից երևում է, որ կնիքի տեր Իսապէկը պատկանել է հոգևոր դասին: Այս արտահայտությունը օգտագործվել է գրեթե ողջ միջնադարում որպես ավանդական բանաձև: Արձանագրության հնագրական հատկանիշները, ցույց են տալիս, որ փորագրությունը պատկանում է ուշ միջնադարյան ժամանակաշրջանին: Առանձնապես դա նկատելի է Ա, է, Ռ, Ք տառերից (իրենց հաստ և ընդգծվածորեն ճկած ելուստներով) և ուժեղ արտահայտված Կ տառի ստեղծների տարրեր երկարություններից: Քրիստոսի անվան հապավումը ՔԻ ձևով ավանդական է միջնադարյան բոլոր արձանագրություններում և ձևագրերում: Սակայն ՄԻ հապավումն անսովոր է: Բոլոր դեպքերում սպասելի է ՄՅ ձևը, որպես սկզբունք բառի առաջին և վերջին տառերի պահպանումով՝ ՄԱՌԱՅ:

Իսապէկ անունն առաջ է եկել Հիսուս և Բեկ անունների միացման հետևանքով<sup>13</sup>: Հայ իրականության մեջ այն հանդիպում է առավելապես XVII դարում<sup>14</sup>: Նկատի ունենալով դամբարանի և արձանագրության ժամանակագրական տվյալները, այս կնիք-մատանին առաջարկում ենք թվագրել XVII դարի կեսերով:

9 Քովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կոստանդնուպոլիս, 1852, էջ 157:

10 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Քիֆիս, 1910, էջ 249, 255, 268, 273:

11 В. А. Крачковская, Печать Багратида Ашота с арабской надписью, КСИИМК, № 12, М.—Л., 1946, էջ 112—117:

12 Նմանօրինակ կնիքներ հայտնաբերվել են նաև Հայաստանում և պահվում են ՀՊՊ թանգարանում: Բոլորն էլ թվագրվում են XVI—XVII դդ.:

13 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, Երևան, 1944, էջ 390:

14 «Հայերեն ձևագրերի հիշատակարաններ», Ժէ դար, հատ. 1 (1601—1620 թթ.), կազմեցին Վ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը, Երևան, 1974, էջ 552, 610, հատ. 2 (1621—1640 թթ.), Երևան, 1978, էջ 26, 210, 211:

Ա. Վ. Բեկի (Բախչիսաբալ)  
Պատմ. գիտ. թեկնածու Ա. Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ